

բնավայր ցոյց կը տրուի Այրարատեան աշխարհը: Հակառակ որ ինծի պակսեցաւ Փարպեցիին և սակայն ծանօթ եմ անոր մէկ վկայութեան «Նա և զարմատս եղէզնաւսեր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատայ, այլ և ի նմանէ ծնեալ որդունս ի զարդ կարմրատեսիլ գունոց ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս»: Իսկ Խորենացոյն հետեւեալ վկայութիւնը արդէն քիչ առաջ տուի, այլ հոս վերստին կը կրկնեմ «Ունի Այրարատ... և որդն յարմատոյ սիգոյ ի զարդ կարմրութեան գունոյ»: Էւ այսպէս «Հիմակուան ճամբորդներուն պատմածէն ալ գիտենք որ ինչուան հիմա նոյն գաւառին մէջ կը գտնուի սա որդը, տաճկերէն չայիր ըսուած սէզին վրայ, տարին երկու անգամ, մէյ մը Մայիս ամսուն, մէյմըն ալ Օգոստոսի կէսէն մինչև Սեպտեմբերի ետքերը: Սաստիկ հովոտ տարիները քիչ կ'ըլլայ, ու խոտերու տակ կամ մանր փոսերու մէջ կը պահուրտի, բայց Քիւրտերը անոնց տեղը գիտեն, կը ժողվեն մեծ ջանքով, ու տաք ջրով կեփեն, անով կը ներկեն իրենց բրդեղէններն ու կապերտները, որով մեծ վաստակ կ'ընեն բոլոր արեւելքի կողմերը ծախելով: Աս որդերուն ներկովը կը շինուի նաեւ էջմիածնայ կաթուղիկոսին կնքամոմը»:

«Քանի որ Այրարատայ գաւառը Ռուսաց ձեռքը անցաւ, տէրութիւնը մասնաւոր կերպով ուշադրութիւն ընել սկսաւ աս շահաւոր բերքին վրայ, ուստի Փեթլըպուրկի ձեմարանը յանձնեց Վրաստանի ու Հայկական նահանգին վերատեսուչ Պարոն Ռոզէնին որ աս որդին վրայ ստոյգ տեղեկութիւններ տայ իրեն: Պարոն Ռոզէնն ալ Վօսքօպոյնիքով և Օսիփով ըսուած Ռուս պաշտօնատէրներուն, ու էջմիածնայ միաբաններէն Տէր Գրիգորեան Սահակ վարդապետին ձեռքովը առած տեղեկու-

թիւնները, և որդին պատկերը, ձեմարանին դրկեց 1832ին, ան ատեն նոյն ձեմարանի անդամներէն Համէլ անունով բազմահմուտը աս որդին վրայ երկայն ճառ մը խօսեցաւ, որ Ռուսերէն տպուած է: Արդ ասոնց ստորագրութենէն կ'երեւի որ աս որդը՝ Յուլիս Օգոստոս ու Սեպտեմբեր ամիսներուն մէջ տեսեր են Երասխ գետին երկու կողմի դաշտերը, նաեւ էջմիածնայ մօտ՝ Շորլի գեղէն ինչուան Խորվիրապ, մանաւանդ աս Շորլի, Սուրվանլար, Նէճէլի ու Հասանապատ գեղերը ու Խորվիրապին քովերը. Երասխայ մէկալ դին ալ՝ Սէֆիապատ գեղին քովերը, ու Այրարատայ ստորոտէն բխած գարս սաւ կամ Սեւ ջուր անունով գետին երկայնքը, Գաշպուրունի ու Գարալըզ ըսուած գեղերուն մէջտեղուանքը: Նոյն Սահակ վարդապետին գրուածքէն սա ալ կ'իմացուի եղեր, թէ նաեւ Խոյայ ու Սալմաստի քովերը կը գտնուի աս որդը, և ընդդէմ չէ, բայց գուցէ ասոր մէկ տեսակն ըլլայ»¹: Մասիններու ստորոտէն, Երասխայ ափունքէն, Կարսի և Սարտարապատի վիճակներէն, Կոտայից գաւառէն, նաեւ Խոյի և Սալմաստի կողմերէն գատ. «Մեր աշխարհի ուրիշ կողմերն եւս կը յիշուի այս կարմրոյ որդն, յարեմուտս կարնոյ գաւառին մէջ, և արեւելեան կողմը՝ ի Մարանդ. այս յետինս կը յիշէ Շարտէն եօթնեւտասաներորդ դարու մէջ»: ԺԸ դարուն վերջին կէսին Այրարատ բարձրացող Մարկով Ռուսն ալ կը վկայէ թէ «14,000 ոտք բարձրութեան վրայ գտաւ վերոյիշեալ կարմրագոյն որդուկս. զեռ աւելի վեր ելլելով, 15,000 ոտք բարձրութեան վրայ՝ կոնածեւ գագաթան ստորոտը գտաւ նոյն տեսակ ուրիշ մեծագոյն որդ մը, կարմիր դալկագոյն, յայտնի է թէ ծանծաղ տեղերու մէջ գտաւ՝ իբրու սառնամանեաց հովիտներուն մէջ, զոր պատրաստեր էր

nella), կամ մանաւանդ ճահճաց մատնիկ (dactylus litoralis) որ կը սնուցանէ ամենէն ընտիր և ամենէն հին ճանչցուած որդն կարմրոյ, հոչակեալ իր շառափայլ գունովն», (Յուշիկը Բ. Ս. Վազար Ա. մաս, էջ 52).

1. «Բագմազ», 1843, էջ 57-57. Տես նաեւ («Բագ-

մազէզ», 1890, էջ 276). «Այրարատայ ամենէն աւելի յատուկ որդնարեր սահմաններն են՝ երկու Մասիններուն ստորոտը, Խորվիրապի կողմերը, Երասխայ ափունքը, մանաւանդ հեւսիսային կողմը՝ Կարսի և Վարդարապատի վիճակներն և Կոտայից գաւառն»: